

ՀԱՍՏԷ

Redaction du Journal

«dravounk»

Varna


Редакция НА

Вестникъ

«Нравуникъ»

Варна

Գրութեանք եւ չան տրոպիր



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏՆԱԿԱՆ

Երկու քիչ մէկ ճրարով
Տարեկան 14 Ֆր.
Վեցամսեայ 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլ.
Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԽԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՐ.

ՍՈՒԼԹԱՆԻ ԳԱՀԸՆԿԵՑ

Այս լուրն է որ կըսպասուի ժամէ ժամ. Շարաթ առաւօտէ ի վեր սկսած են Սահմանադրապետ Բանակին թնթանոթները ուստի Սուլթանին հաւատարիմ եղող և անցեալ շաբթուան յետադիմական շարժումին մասնակցող յանցաւոր զօրաց ապստամբները կը քանդուին ու ճշմարիտ իշխանութիւն Մեծ Ուստադը զորակաւ գահին հետ իր կեանքն ալ կորսնցնելու վշտանքին առջեւ կրկին սկսած է նոր խաբէրաշուքներու դիմելու միջնորդներու միջոցաւ խոստանալով որ ինք անուանական վեհապետ մնայ եւ բնաւ չի միջամտէ պետական գործերուն. Բայց չի կարծուիր թէ Օսմ. Գոմիթէն այս անգամ ալ տղայական միամտութիւնը ունենայ այդ ուխտադրութիւն Ուստադին խոստումներէն եւ երդումներէն խաբուելու. «Խաբաւորել բայց չի կռոււ» քան իսկ Սահմանադրական դիրքէն ելլելու համար իրենց ուղղութիւնը զաւարթումով զարկին զաւարթութիւնը չպիտի սորբէր. Սկիզբէն ի վեր ոտնորկի լուծած գարշելի գազան մը չէ կաթնի մէկ օրէն միւսը իրեն ընկած դարձած հակումներէն մի անգամ ընդ միշտ ետ կեցը. Եւ այս օրինակ հակաբանական ու յանկարծական յեղաշրջումի մը հաւատալու համար մորդ ապուշ ըլլալու է եւ կամ Ահմէտ Բիգայէի պէս յետին մտքեր և ակնկալութիւններ ունենալու է. Բայց ասոնք ալ այլեւս խաբուելու կամ ո՛ր եւ պայմանաւ Համիդէ գահին վրայ թողնելու երեւոյթը չունին. որովհետեւ կը մտաբան թէ եթէ անգամ մըն ալ այդ գազանը չլծայազերծուի, ապա բան կը լափէ, եւ Ահմէտ Բիգայէի պէս յետին մտքեր և ակնկալութիւնները բուն իսկ իրենց կեանքին ապահովութեանը համար Համիդին կեանքին վերջ տալու կանխադրութիւնը ձեռք առնելու ստիպուած են. այսօր գո-

հընկեց զընեն իսկ վաղը Ազիզին տարօր կը բերեն անոր գլխին. Եւ այսպէս պէտք է վարուին. որովհետեւ իթթիհատականները իրենց կաշիին վրայ նորագոյն փորձը տեսան թէ թիւրք տարրը, անշանք քացաւորութեամբ, տախաւին բարբարոս խուժան մըն է, որուն չէ կարելի վստահիլ եւ որ երէկի համբուրածը այսօր կը պղծէ, այսօրուան պաշտածը վաղը կըսպաննէ, բաւական է որ իրենց կրօնական մոլեռանդութեան կոչ մը ըլլայ եւ բերանը ոսկոր նետուի. Սահմանադրութեան պահպանման համար քանի մը ամիս առաջ Ուստադին բերուած որսորդ զինուորները չէ՞ որ ամենալուրջաւոր թշնամիները հանդիսացան երէկ նոյն Սահմանադրութեան. Եւ այսօր ո՞վ կրնայ վստահացնել մեզ որ երէկ էտիրէնէն եւ Սեւանիկէն հասնող եւ այսօր Պոլսին տիրող ու երկտըզը պաշարող զինուորները, եթէ քանի մը շաբաթ ազատ ձգուին յարաբերութեան մէջ մըտնելու փաթթոցաւորներու հետ, չպիտի բռնեն այն ընթացքը զոր բռնեցին քանի մը ամիս առաջ եկող իրենց ընկերները.

Վերջին դէպքերը ոչ միայն ապացուցին թէ մինակ Սուլթան մը չարաչար խաբած է ամբողջ Օսմ. Գոմիթէն, ոչ միայն ապացուցին թէ թուրք զինուորին ոչ սահմանադրականութեան եւ ոչ երդումին հաւատարմութիւն կը լայնաբեր ապացուցին թէ — ինչ որ շատ ցաւալի է — գաղափարական երեւոյթ թիւրք Ազատականներուն ալ շատ վստահութիւն չըլլար, երբ անոնք ընդունակ տեսնուեցան իրենց կիրքերուն մէջ այն աստիճան առաջ երթալու որ ծայրայեղ աղատակաշունչութեան հրաժարելու գացին դաւակցեցան էն յետադիմական տարրերու հետ. նոյնիսկ

պաշտուած սահմանադրութիւնը կորսնցնելու գնով.

Մենք այս տողերով ամբաստանել չենք ուզեր թուրք Ազատականները. բայց չենք ալ կրնար անուշադիր անցնիլ Մուրատ պէյի նման սեւ անցեալ մը ունեցող տխրահոյակ հերոսներու այդ կուսակցութեան մէջ ընդունուած այնպիսիներու շահատակութեանց ազատ ասպարէզ տրուած ըլլալու պարագայէն. Մուրատ պէյին Ազատականներու մէջ ներկայութիւնը առաջին օրէն մեղ խոտելի ըրած էր այդ կուսակցութիւնը. որովհետեւ մեզ ծանօթ է տասնեակ տարիներէ ի վեր անոր բռնած դաւաճան ընթացքը Ազատութեան գաղափարին դէմ. ահ այս անգամ ալ նոյն դաւաճան վարմունքը ունեցաւ ներքնապէս դաւակցելով իթթիհատը Մուհամմէտին հետ, որուն միակ նպատակն էր Սահմանադրութեան մոխիրին վրայ Շէրաթը պանծացնել.

Մուրատ պէյի և իր նմաններուն այս դաւակցութիւնը այսօր ակնյայտ պարզուեցաւ բոլոր Օսմանցիներուն առջեւ, որով սեւացաւ և իր վարկը կորսնցուցուց Ահրարականութիւնը հանրութեան առջեւ.

Յ. Պարպիք

ԿԵԼԻԿԻՈՅ ԱՆԵՐՈՒՄԸ

Կրիկիայէն լսուող եւ օրէ օր դէպի Փոքր-Հայք ու Սուրիա տարածուող հակաքրիստոնէական շարժումը զգլխից տպաւորութիւն մը կը թողու օրուան դէպքերուն հետեւող ամեն անհատի վրայ. Տեղ տեղ կառավարական պաշտօնէից եւ զօրքին մասնակցութիւն ալ կը հաստատուի. Հապա Ատանայի էշրիֆներուն «վերէն հրաման կայ չի միջամտելու» խօսքը կը պարզէ նոյն իսկ Պաշայ վարիչ մարմիններու մեղ սակցութիւնը. Արդէն այդ կապացուցանէր ներքին գործոց խորհրդական Ատէյ պէյի վարմունքը հանգէպ համազգային պատգամաւորութեան. Այդ կորստածին եւ հրեհեղութեան պատասխանատու է ոչ միայն, Կոստակայ, Միւթէսարիֆները, ու Փայմազամբը նաեւ Ատիլ պէյը եւ Հիւսիֆ փաշան, մանաւանդ սա վերջինը, որուն պաշտօնավարութեան օրէն սկսաւ Հայոց

վրայ յարձակումը եւ որ յամառօրէն պահեց իր քով այդ Ատիլ պէյ կոչուող սրիկան. որ իննսունական թուականներու ընդհանուր ջարդերուն ատենն ալ նոյն պաշտօնին մէջ գտնուող, պատասխանատու էր բոլոր անցուղարձերուն.

Առայժմ աղէտն էր կը շարունակուին, պատասխանատուութիւնները կը կուտակուին բայց չէին գիտեր թէ երբ պիտի սկսի այդ դրութեան խաղաղ շառաչումը անհամար պատահանաւորներու եւ ոճրապարտներու գլխին ու թիկունքին. Օսմ. Սահմանադրութիւնը իր ու թաւաշայ շրջանին մէջ հազիւ թոյլատրեց միայն Նէճիպ Մէլիքին (այն ալ քրիստոնեայ) օձիքը բռնելու. տեսնե՞ք Սահմանադրական ուժի մը մէջ Կրիկիայ գործուած խժոժութեանց համար որոնք պիտի ըլլան քաւութեան նոխադրերը. վերջապէս յաղթական ելլող ժեյն — թիւրք կառավարութիւնը մի գոցէ կեսարիոյ զէպքին նմանցնէ Կրիկիայ այս վերջին արեւոտ դէպքն ալ.

Կը կասկածինք, որովհետեւ լաւատես գուշակութիւններ ընելու գործական փաստ ցոյց տալ չի կրցաւ մեզ տակաւն ոչ ժեյն — թիւրքերու կառավարութիւնը եւ ոչ ալ Ահրարներու ընդդիմադիր կուսակցութիւնը.

Մէրսին ապր. 2 ԵՂ.

Ատանայէն փախստական Յոյն մը եկաւ եւ հետեւեալը պատմեց. «Ատանայի գործը լմացաւ բոլոր շուկան աւարի տրուեցաւ. բաւին իսկական նշանակութեամբ, ամեն ինչ թիւրքերուն տուները լեցուեցան. Հայոց թաղը կրակի մէջ էր. տուն մը այրեցին, որուն մէջ 250 հոգի լեցուած էին, նաեւ ուրիշ շատ մը տուներ, եւ դեռ կրակի մէջ էր. հազիւ այս առաւօտ (ԵՂ.) ինքզինքս թաքստու յետոյ Մէրսին, եւ հիմա աւետեցի գիշերանոցով. Անգլ. հիւպատոսը հին է. Հեռագիր մը եկաւ մեր նաւապետին. «կացութիւնը լուրագոյն» (բայց Յոյնը չի հաւատար) ձամբուն վրայ 500 տուննոց Հայ գիւղ մը այրացաւ. Երբ ըրած էին. մարդ չէր մնացած. Հայոց ազարակները այրեցին, այդքան տաններու տուները, ծառերը կտրեցին, ջնջեցին. ամէն ինչ. Զարդն սկսաւ երեկոյ ժամը 3 ին, եւ դեռ լրացած չէր այս առաւօտ. Զօրքերն օգնեցին ամեն կերպով իրենց հրացաններով թէ՛ մարդ զարկին եւ թէ

խանութներուն գուռները կոտոր-
տելով օգնեցին, եւ իրենք ալ
լեզուեցան աւարով: Սա տողերը
կը գրեմ հապճեպով: Ներքե՛ք:
«Իժմալ» թերթին խմբագիրը
իման պէ՛յ շատ փնտռեցաւ
խուժանին կողմէ, որ պիտի սպան-
նէին, զի երկու ամիսէ ի վեր կը
գրէր թէ Ալյա կուսակալն անկա-
յող է, փոխելու է, թէ մէծ փոր-
ձանք մը պիտի գայ Ատանայի
վրայ: Կառավարութիւնը շատ
թալ էր կուսակալը պէն պիր
չէ՞յ եւրամամ» ըսաւ մէջէն ելաւ
էջրափն եւ իւլէման կրնային ա-
ռաջըն առնել, բայց թուրքերը
կըսէին թէ վերէն հրաման կար
որ չի միջամտին:

Պատճառ ցոյց կը տրուի սա
գէպքը: քանի մը գինովներ կը
յարձակին Հայու մը վրայ, ան
ալ ատրճանակով կ'սպաննէ ա-
նոնցմէ մին ու կը փախչի: Թուր-
քերը կ'պահանջեն զոյ՛ն, սակայն
չի գտնուիր: Ասկէ կսկսի ջարդը
նոյն իսկ Հայոց կողմէն ու ձիերը
կը դարնեն երբ հօտը կուգային:
Աստուած ողորմի ոյս բազմաչա-
հայ ազգին: Հիմա լուր առինք
թէ «Լօրլէ» գերմ. շոգենաւը
կուգայ, նաեւ անգլ. եւ ռուսական
զրահաւորները կըսպասուին:
2000էն աւելի զոհ կայ կըսեն,
բայց որոշ չէ, Հիմա ժամը 11.5
(ը. թ.) Սալ զրահաւոր մը կու-
գայ զինուոր կը բերէ իզմիթէն:
«Քիզսնդիդ»

ԱՌՈՋԱՆ ԳԻՐՔԵՐԻՆ ՊԵՏՔ ԵՐ

Դո՛ւ ո՛վ Ամէն, Բիգա ե. ո՛վ Մի-
ռնթիւն եւ Յոռա՛յգի մո թեան գո՛ւթթէ
ձեզի այս խօսքը: Է որ այժմ կուղի
Համար ճիշտ այն կն, կին պէս որ իր
էրկանոն ակոսանք համարէին վերջը ա-
նոր անտական սպան զիջին կի՛թար-
կուի: Դո՛ւ պո. Տօնքիջողներ զուք
ձեր ապու շու թիւնը երթէ՛ք Լըթէ՛ք ունէ
կ'ըզով չէք կրնար քաւել: Դո՛ւք երկու
զրահաւորներ Ոսկեղջիւրէն: Դանելով
զանոնք Ուփոր փոխադրելով եւ կա գ
մը զորքը Երլտըզէն հանելով կարծե-
ցիք թէ ալ Սուլթան Համար ավեր-
նիդ առիք եւ ուզածնիդ կրնայիք ջնջ
ու այդ անարկու բերդը առնել: (Դ) Ետոյ
իբր թէ ալ ուրիշ ընելիք բան չունի-
նայք ողիցիք հայերը ճգմել խորհրդ
դարանական «Մէնկէնէյին» տակ՝ հա-
յակեր ու գազան երիւփոխաններու
ըսով, ութիւնը վառելարցնելով, ձենէ
զատ ուրիշ կուսակցութիւն չի ճանչը-
նալով եւ զա՛ռնք մեծամասնութիւն
անիրաւ «Մէնկէնէյին» տակ ձնելը
բաւ չի համարելով մինչեւ սպաննելու
ալ առաջ երթալով, առի՛ք մի հիմա՛յ.
սոիք մի հիմակ հատէ գտցէք տեսած
նուր պէս պատմեցէ՛ք:
Ասկէ 9 տարի առաջ երբ Բարիզ կը
գննուէի քանի մը երիտասարդ թիւր-
քեր կալծելով որ ես ալ Դաշնակցա-
կան կամ Հնչակական տնօրէնութե-
լէն եմ որ նք չի գիտցած, չուսուցեա
սխառ գործերուն մէջ մտնալով ու ա
նոր զեկակար հանդիսանալով իրենց
փառասիրական ու շահախորական
կրքերուն զ հառելն ազգը՝ ինձի ըսին,
«Ի՞նչու մեզի չէք միանար: Այս հարց
մէն պատասխանս Լիզա, բայց դուք
ո՞վ էք... 9 տարի վերջը ճիշտ այդ

միեւնոյն հարցումը կրնամ ընել եւ
այսօր բայց զա՛ռնք չէք... ու պա-
տասխանն ալ ես մէջ կողմէն կուտամ
եթէ դուք կամենաք ըսելու մենք տօն
ք'չօթնիք» եւ:
Գալով մեր Դաշնակցական ազա-
րուհի անոնք այնքան ծիծաղելի են
որ իբրեւ հայ կամենամ խօսել անոնց
մտքին աղքատութեան մասին: Երբ իթ-
թիւնս ի կեդրոնին, Շուրայի Իւլիթի
եւ Թանկիթի խմբագրատանց փու-
զումներուն լուրը եկաւ, տեղիս Դաշ-
նակցական եղբայրները սկսան ըսել
«զատականները յաղթանակը տարին»
եւ: Յիշեալէ այս աւետիսը իրենց տը
ուող հետագիւր մըն ալ ձեռքերնին ու-
ր խութեամբ կաւեւեին թէ զօրքերը
կենցէ՛ Դրիգոր Զօհրապ պրոպագնդն,
Թէ Զօհրապ գերնախագահ եղբէր է թէ
եւայն, անտէր միամտութիւն, միայն
հայերու բաժինն ես:

Բ. ՔԱՂԱՔ Ծարուն

ԻԷԱԳՅՈՒՆԻ ՕՐՈՒԱՆ
ՄԱՄՈՒԼԸ

ՃԷՄԻԹԵՒԻ ԻԼՄԻԹԵՒԻ ԻՍԼԱՄԻԹԵՒԻ
ՆԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Ճէսիթի Իւլիթի Իսլամիթի մէկ
յայտարարութիւնը, մէկ քանի օրուան
դէպքերը համառ տակի յիշելէ ետքը,
կըսէ թէ կարծողներ եղած են որ զին-
ուորներու այդ ընթացքը, «զատու-
թեան շարալար գործածուելովը, կրնայ
Շէրիթի տրամադրութեանց խան-
գարուելուն պատճառ ըլլալ նոյն յայ-
տարարութիւնը կը յարէ թէ Կ. Պոլսոյ
մէջ խնդիրը կարգադրուած եւ հան-
գարուութիւնը տրուած է. միայն թէ
զինուորներու եւ կարգ մը սպաներու
միջեւ գծուած թեան միացորդ մը կայ:
Ճէսիթի Իւլիթի Իսլամիթին, այդ
միացորդն ալ անհետացնելու համար,
կրօնաւորները զրո՛ւս է բոլոր զօրա-
նոյնելը եւ պահականոցները, որպէս-
զի յորդոր կարգան զինուորներուն ը-
սելով որ ըստ Շէրիթի պէտք է հնազան-
դին իրենց սպաներուն եւ եթէ սպայ
մը Շէրիթի անհամապատասխան ընթաց-
քի մէջ գտնուի, անոր պատիժին՝ սահ-
մանու մը կառավարութեան եւ մասնա-
ւորաբար Շէրիթին անկ է: Գարգիլնե-
րը յայտարարեցին թէ զինուորները
եթէ իրենք իրենցմէ այդ տեսակ պա-
տիժներու ձեռնարկեն, շատ մը սխալ-
ներու պատճառ պիտի ըլլան: Աշխարհի
պատիժէն եթէ ազատին ալ հանդեր-
ձեալին Աստուծոյ բարկութեան պիտի
չկրնան սպասել: Վասնզի, իրենց ըն-
թացքով վտանգի պիտի ենթարկեն
հայրենիքը, երկիրը եւ իսլամական
կրօնը: Գաւառներու բոլոր նախկին-
րուն եւ միջթիւններուն ծանոց ու
ցաւ որ նոյն միտքով յորդորներ կար
գան զօրաբանակներուն:

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ
ՍԱՀՄԱՆԻԴՐՈՒԹԻՒՆԸ

«Նէրի կազէթայի» շաբաթ օրուան
թիւին մէջ հետեւեալը կը կարդանք.
«Վոլլան լրագրին 1 ապրիլ 1325ի
թիւին մէջ սխալմաներու. Խալիֆիին
Ապտիւլ-Համիտ Խանի ուղղուած
«Բայ նամակ» խորագրով սօղուածի մը
մէջ ըսուած էր. —Այսօր, ձեր կայս-
ձիւքը կը գտնուի մեր սահմարական
զրուրթիւնը վերցնելու եւ օսմ. Երեսփ.
մողովը փակելու: Այս պարբերութիւնը
կ'ըզանք աւսպէս ուղղել — Հաս

տատուած իրողութիւն մըն է թէ խոր-
հրդակցութիւնը, որուն օրհնաւոր է
կը հաստատեն կրօնական տրամադրու-
թիւններ, ի. հիմակաւն վճակին
մէջ ազգին ներկայացուցիչներ պէտք
է կուտարն, թէ Սահմանադրութեան
տրամադրութեանց յարգութիւնը կը ծա-
ռայէ Շէրիթի տրամադրութեանց եւ իս-
լամական Պատ. թեանց տեսական ըլ-
լալուն եւ օսմ. ազգին բարգաւաճում-
նը եւ զարգացումը, եւ լիք հակառակ
պարագան մեծ խոտվութիւն մը յառաջ
բերելով, պատճառ պիտի ըլլայ որ մեր
երկիրը ու հայրենիքը թշնամիներու
յարձակման ենթարկուի: Ուստի ամե-
նուն համար պարտականութիւն մըն է
պահանջել Սահմանադրութիւնը: Սուլ-
թանին հրամանին համար պէտք է որ
հրամանին առարկան օրինաւոր ըլլայ:
Շէրիթի հակառակ եղող հրամանին հնա-
զանդիլ արժան չէ: Օսմ. բոլոր զին-
ուորները կրօնական բոլոր ուսանող-
ները, բոլոր կրօնաւորները եւ մող-
վալդը, որոնք վերոգրեալ պարագա-
ները գիտեն, բռնապետութեան չորիքը
տեսած են եւ Սպահնադրութեան վը-
րայ երլում ըրած են, հաստատապէս
յայտնի է որ երբ Սահմանադրութիւնը
զարգեցնելու նպատակով պարզ ձեռ-
նարկ մը իսկ ըլլայ, իրենց կ'անքն
իսկ զոհելով արդէ՛ր պիտի ըլլան, Ուր-
դէն հաւատացեալներու հրահանատար
մօք վհակեալ, որ Սահմանադրութիւն
նը լաւ պահպանելու մասին երդում
ըրած է, անկարելի եւ անհասկանա-
ն է որ երիտի մողովը փակելու հակա-
մէտ ըլլայ: ուստի կը յայտարարենք
թէ վերոգրեալ պարբերութեան մէջ
կարելի ցոյց տալը ուղիղ չէ»:

Եւնի կազէթա երբ գոնէ այս-
չափ համարձակութիւն կուեննի
այդ օրերուն, մեր ազատական(ը)
«Սանզումէն» անմիջապէս ուղ-
սիտի օտկանը դարձած էր, ինչ-
պէս որ էր ազատութեան հաշա-
կուլէն առաջ, անմոքելի սուլթա-
նատէր մը: «Իրկանդիտն» եւ «Ա-
րեւելք» միջին ճամբայ մը ըրու-
նած էին:

ԹԵԼԵԿՐԱԳՐԱՐ

Բարիզ 12 ապրիլ

Սթանպոլտան պիտի իրիյոր պու-
կիճէ 20 սօքէր գուրչուա թմու-
թուլտըլար: Իտարիէի ասքերիէ
իլան օլունմուշ օլմալլէ, Սթան-
պոլտա միւնիսթր լագէնէնէնէք
տիր, ետիւտաւ ասքերիէր գուրչու-
նա տիղիլէնէքլէր վէ էնվաի ույ-
կունսըլըզլարա սէպէպ օլան հա-
մալլար: սօթթալար վէ սայիրլէր
քի՛ էսկի լէթիմէ մէնսուպ տըր-
լար: ասքերիէ մահքէ՛ստիտէ
թահթը մուհաքէ՛մէյէ ալընիյոր,
Գալիէն թէմիւն օլունիյոր քի՛
Սուլթանըն թախթտան էնտիրիլ-
մէսի այլըն 13 ինտէ վուգու պու-
լաճաք:

Սթանպոլ 12 ապրիլ

Երլտըզա Սէլանիք ասքերիէրի
մուհասէրէյէ պաշլամըշ օլունպ,
Սուլթան Համիտի պիւթիւն պիւ-
թիւնէ տըշարը աթարազ, անըն
եէրիէն Բէշաւ էֆէնտի Սուլթան
իլան իտէնէրլէր

Տիւն սաաթ պիրտէն սօնրտ Սէ-
լանիք ասքերիէրի Երլտըզըն
իլաքէք մէվգըլարընը իշլալ
իթտիլէր, էյլէքի՛ Երլտըզ սէ-
րայընըն հէր թարաֆտան իհա-
թէսի 1—2 սաաթտան թէմամ-
լաճաք տըր:

(Սաաթ 2) Երլտըզըն մուհա-
սէրէսի պաշլամըւ Ասքեր Շիշ-
լիյէ սօլտու: Սէրայըն արգա-
սընտաքի Գըլալա սիւվարիլէր
եէթիշտի:

Տիւն իքի թարաֆտան 1140
քիշի թէլէֆ օլտուլար:

Սթանպոլ 12 ապրիլ

Երլտըզտան ալընան մալիւմա-
լա պէնաէն, սէրայատաքի շահ-
զատէլէր, սուլթանլար վէ պիւ-
թիւն հարէմ տիւն կիճէ Երլտըզ-
տան կիթմիշլէր, Խըզմէթմիշլէր
օնլարին կիթմիշլէր կէօրէրէք
Սուլթանըն պիւթիւն էյեալարը-
նը սօյմալա վէ գարըշլալա պաշ-
լամըլար: Սուլթանըն տախի կիթ-
միշ օլմասը սէօյլէնիյոր:

ԹԵՍՏ ԷՖ. ՍՈՒԼԹԱՆ
ԻԼԱՆ ՕԼՈՒՆՈՒ

Տիւն (14 ապրիլ) սաաթ 4 ու
Սթանպոլտան վէրիլուպ, պու-
սաաթտա պիզէ թէպիլզ օլունան
թէլէկրամ Ռէմս էֆէնտիին
Սուլթան իլան օլունտըզըն պիւ-
տիրտի:

Ճանիթէքպէր վէ մէնպաիֆէ-
սատ օլան վէ 33 սէնէտէն պէրու-
միլիտնլարճա պիկիւնահլարըն,
պախուսուս՝ միլլէթաշլարմը-
զըն գանընը սէլ կիպի տէքթու-
րէն Ապտիւլ-Համիտ պու կիւն
թաճ ու թախթընը զայպ էթտի-
կի կիպի, ինչալլահ, Եարընտէ ճա-
նիլէրէ մախսուս սանտալիալա օ-
թուրուպ, իտամընըն իլամընը
գուլագլարը իլէ տիւնլէնէէք
տիր:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

«Իրաւունք»ի խմբագրա-
տունէն կարելի է ստանալ
հետեւեալ գիրքերը:
ՂԱՐԻՊ ԱԽՊԼԵՐ Գիւն 1. ֆր
ԱԶԱՏ ԵՐԳՈՐԱՆ 1. ֆր
ԹԻԱՊԱՐՏ Ա. հատոր, 1.50 ֆր
ԹԻԱՊԱՐՏ Ա. 2. ֆր
ԻՐԱԽՈՒՆՔԻ հաւաքածոյ մէկ
տարուանը 12 ֆր:
Դրալը կանխիկ չի զրկուած
յանձնարարութիւնք նկատի չեն
առնուիր:

Դպրոցական տղայոց համար
Ազատ Երգարանը կը վա-
ճառուի 80 սանդիմի: